ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

✓ Կարևոր է իմանալ

Օդային տագնապի դեպքում՝

- էլեկտրաշչակների միջոցով տրվում է ընդհատվող ձայնային ազդանշան՝ 2-3 րոպե տևողությամբ,
- ազդարարման միջոցներով տրվում է կարճ հաղորդագրություն՝

«Օդային տագնապ»՝ պատսպարվել պաշտպանական կառույցներում:

Օդային տագնապի ավարտի դեպքում՝ տրվում է անընդհատ (չընդհատվող) ազդանշան՝ 2-3 րոպե տևողությամբ, որից հետո անհրաժեշտ է հետևել հեռուստատեսությամբ, ռադիո-հեռարձակմամբ, բարձրախոսներով տրվող պաշտոնական հաղորդագրություններին:

112 rescue.mia.gov.am

ՀԱՄՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԵԼ Է ՄԱԿ-Ի ՓԱԽԱՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

UNHCR The UN Refugee Agency

Co-funded by European Union Humanitarian Aid

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«Օդային տագնապ» ազդանշան

Քաղաքացիական պաշտպանության համաշխարհային օր՝ մարտի 1:



Ի՞ՆՉ ԱՆԵԼ «ՕԴԱՅԻՆ ՏԱԳՆԱՊ» ԱԶԴԱՆՇԱՆԻ ԴԵՊՔՈՒՄ

ԵԹԵ ՏԱՆՆ ԵՔ՝

Մինչ բնակարանը լքելն անհրաժեշտ է՝

- անջատել գազամատակարարումն ու էլեկտրասնուցումը,
- փակել ջրի ծորակները,
- հագնվել, հագցնել երեխաներին ու ծերերին,
- վերցնել առաջին անհրաժեշտության դեղամիջոցներն ու անձը հաստատող փաստաթղթերը,
- վերցնել անհրաժեշտ իրերն ու որոշակի քանակությամբ սննդամթերք և ջուր:

Արագ՝ առանց խուճափի, պատսպարվել նախատեսված թաքստոցում: Հնարավորության դեպքում տեղեկացնել հարևաններին:

ԵԹԵ ՓՈՂՈՑՈՒՄ ԿԱՄ ԲԱՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՔ՝

Որոշե՛ք մոտակա թաքստոցի տեղը և պատսպարվե՛ք այնտեղ:

Թաքստոցի բացակայության դեպքում պատսպարվե՛ք՝

- հեղեղատների համար նախատեսված կառույցներում,
- տարբեր տեսակի փոսորակներում,
- թմբապատնեշների և ոչ բարձր պատնեշների հետևում:

ԵԹԵ ՉԵՔ ՀԱՍՑՐԵԼ ԴՈՒՐՍ ԳԱԼ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԻՑ, ԱՊԱ ՊԵՏՔ Է՝

- պատսպարվել շինության այն տարածքում, որի պատերը դրսի հետ չունեն անմիջական կապ,
- միջանկյալ տարածքների բացակայության դեպքում տեղավորվել հիմնական պատերի տակ, հատակին, թիկունքով դեպի արտաքին պատերը, դրսից չդիտարկվող տեղանքում,
- շինության վերգետնյա հատվածում արգելափակվելու դեպքում փորձել պաշտպանվել ձեռքի տակ եղած իրերով՝ սեղաններ, աթոռներ, պահարաններ և այլ իրեր, որոնք կպաշտպանեն բեկորներից:

ԵԹԵ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ ԵՔ՝

- չլքե՛ք տրանսպորտային միջոցն ընթացքի ժամանակ,
- չխոչընդոտե՛ք վարորդի գործողություններին,
- տրանսպորտային միջոցը կանգնելուց հետո առանց խուճապի դու՛րս եկեք փողոց և պատսպարվե՛ք մոտակա թաքստոցում:

ԵԹԵ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ԿԱՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՔ՝

- ուշադիր և հանգիստ լսե՛ք համապատասխան հրահանգը մոտակա թաքստոցի տեղակայման և դրանց հասնելու կարճ երթուղու մասին,
- արագ, առանց խուճապի շարժվե՛ք նշված երթուղով և պատսպարվե՛ք թաքստոցում,
- համապատասխան հրահանգ չլինելու դեպքում դու՛րս եկեք փողոց և պատսպարվե՛ք մոտակա թաքստոցում:

Հիշե՛ք.

«Օդային տագնապ» ազդանշանը տրվում է օդային հարձակման դեպքում:

Օդային տագնապի դեպքում բնակչությունը պետք է պատսպարվի պաշտպանական կառույցներում: